ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

DEMOCRACY DEVELOPMENT
FOUNDATION

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎՈՒՅՑ

ANNUAL REPORT

2023

Երևան
Yerevan

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
CONTENTS

ՆԱԽԱԲԱՆ
PREFACE 03

ԾՐԱԳՐԵՐ
PROGRAMS 04

ԴՐԱՄԱԾՆՈՐՀՆԵՐ
GRANTS 32

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ
MEMBERSHIP 33

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
PARTNERSHIPS 34

ԶԵԿՈՒՅՑՆԵՐ, ԿԱՐԾԻՔՆԵՐ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
REPORTS, OPINIONS, RECOMMENDATIONS 39

ԿԱՊ ՄԵԶ ՀԵՏ
CONTACTS 41

ՆԱԽԱԲԱՆ

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամը (ԺԶՀ), ստեղծված Բաց հասարակության հիմնադրամների հենքի վրա, ձգտում է նպաստել Հայաստանում ժողովրդավարության, անվտանգության և մարդու իրավունքների առաջխաղացմանը՝ աջակցելով ժողովրդավարության կողմնակիցներին և ստեղծելով ընդհանուր արժեքների ու փորձի վրա հիմնված գործընկերություններ:

Մեր տեսլականն է այն Հայաստանը, որտեղ երաշխավորված են քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, արժանապատվությունը, խաղաղությունը, անվտանգությունը, քաղաքացիական մասնակցությունը և սոցիալական արդարությունը:

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամն ունի բացառիկ դեր քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ) համախմբելու գործում՝ համակարգելով նրանց աշխատանքն ու ջանքերը և այդպիսով զարգացնելով ՔՀԿ-ների ամուր դաշինքներ՝ ի շահ Հայաստանի քաղաքացիների:

ԺԶՀ ռազմավարությունն իրականացվում է հիմնադրամի աշխատակազմի ջանքերով և քաղաքացիական հասարակության դաշտի մեր առանցքային գործընկերների լայն ներգրավվածությամբ: ԺԶՀ բոլոր ծրագրերը նախապես և մանրակրկիտ քննարկվում և հաստատվում են հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի կողմից, որը բաղկացած է Հայաստանի գիտական, հասարակական, ակադեմիական և արվեստի ոլորտի անվանի գործիչներից:

PREFACE

The Democracy Development Foundation (DDF), the spin-off of the Open Society Foundations, aims to contribute to the advancement of democracy, security, and human rights in Armenia through supporting pro-democracy actors and creating partnerships based on shared values and expertise.

Our vision is a just, peaceful and secure Armenia where citizens enjoy human rights and freedoms.

The Democracy Development Foundation plays an exceptional role in convening Armenia's civil society actors and facilitating their activities and efforts by cultivating robust alliances of CSOs around democracy reforms benefiting the citizens of Armenia.

DDF implements its strategy through the efforts of the Foundation's staff and the wide engagement of our key partners from civil society. All DDF's programs are thoroughly discussed and approved by the Foundation's Board of Trustees, which consists of eminent figures representing Armenia's non-governmental, academic, and arts circles.

ծրագրեր

PROGRAMS

Արդարադատություն և հակակոռուպցիոն բարեփոխումներ

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամը ներգրավված է արդարադատության և հակակոռուպցիոն ոլորտներում արդյունավետ բարեփոխումների մշակման, ջատագովության և դրանց նկատմամբ հանրային վերահսկողության ապահովման գործընթացում: Համագործակցելով քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, պետական և միջազգային կառույցների, փորձագետների և լայն հանրության հետ՝ մենք հաստատակամ ենք հակակոռուպցիոն օրենսդրության, դատաիրավական բարեփոխումների իրականացման, այդ գործընթացի թափանցիկության երաշխավորման հարցում:

Այս աշխատանքի վերջնանպատակն է մշակել և իրականացնել այնպիսի բարեփոխումներ, որոնք ամրապնդում են Հայաստանում իրավունքի գերակայությունը և ապահովում բոլոր քաղաքացիների համար արդարադատության մատչելիությունը:

Justice and Anti-Corruption Reforms

The Democracy Development Foundation is engaged in the promotion of impactful reforms in the areas of justice and anti-corruption through active advocacy and public oversight of such reforms.

By collaborating with a range of diverse civil society organizations, state institutions, international organizations, experts, and the public in general, DDF pushes for the enactment of anti-corruption legislation, judicial reforms, and transparency measures.

The end-goal of these efforts is to develop and implement reforms that fortify the rule of law in Armenia and ensure access to justice for all citizens.

Ներկայացրել ենք առաջարկներ Բարձրագույն դատական խորհրդի կողմից նախաձեռնված դատարանների ծանրաբեռնվածության թեթևացման, դատարանների աշխատանքի արդյունավետության բարձրացման մասին օրենսդրական նախագծերի վերաբերյալ: Մեր աջակցությամբ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ն իրականացրել է 2022-2023 թվականների դատավորների ընտրության և կարգապահական վարույթների մշտադիտարկում, որը վերհանել է հստակ խնդիրներ: **Մշտադիտարկման զեկույցի** հիման վրա մշակվել և որոշում կայացնողներին են ներկայացվել բարեփոխումների առաջարկներ:

Անցումային արդարադատության թեմայով **առաջարկներ ենք ներկայացրել** ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված փաստահավաք հանձնաժողովի ստեղծման օրենքի նախագծի վերաբերյալ: Ներգրավել ենք մեր գործընկեր Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի (ICTJ) փորձագետներին որոշում կայացնողներին լավագույն փորձի ներկայացման նպատակով:

We presented recommendations on the draft legislation packages initiated by the Supreme Judicial Council for alleviating the workload of courts and improving their efficiency. With our assistance, the NGO "Protection of Rights without Borders" conducted monitoring of judge selection and disciplinary proceedings in 2022 and 2023, uncovering significant issues. Based on the **monitoring report**, reform proposals were elaborated and presented to the decision makers.

Recommendations on the topic of transitional justice **were presented** in respect of the draft Law on the Creation of a Fact-Finding Commission, which was elaborated by the Ministry of Justice. We brought on board experts from the International Center for Transitional Justice (ICTJ) with a view to sharing the international best practices with the decision makers.

Արդարադատության նախարարության, Բարձրագույն դատական խորհրդի, Գլխավոր դատախազության, Հակակոռուպցիոն կոմիտեի, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, դատավորների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և հետաքննող լրագրողների համար կազմակերպել ենք փորձի փոխանակման այցեր Սլովակիա և Ալբանիա՝ ուսումնասիրելու վեթինգի փորձը, հակակոռուպցիոն մարմինների անկախության, գործունեության կազմակերպման առանձնահատկությունները, որոնք միտված են բարելավել օրենսդրությունն ու պրակտիկան Հայաստանում:

Justice Ministry, Supreme Judicial Council, General Prosecutor's Office, Anti-Corruption Committee, Corruption Prevention Commission representatives, judges, civil society actors, and investigative journalists benefited from experience sharing visits to Slovakia and Albania. They examined these countries' experiences with vetting processes, the independence of anti-corruption bodies, and the unique operational characteristics, aiming to enhance legislation and practices in Armenia.

«Ուսումնական այցի արդյունքում ձեռքբերված հմտություններն ու փորձի փոխանակումն էական ազդեցություն ունեցան ներկայումս լրամշակման փուլում գտնվող Դատական օրենսգրքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի մշակման գործում»:

Մերի Բադալյան,
ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության գլխավոր իրավաբան

"The skills acquired, and experiences shared during the study tour played a significant role in connection with the ongoing efforts to draft the Judicial Code and related laws."

Meri Badalyan, *chief lawyer in the Anti-Corruption Policy Development and Monitoring Department of the Republic of Armenia Ministry of Justice*

Մի խումբ դատախազներ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի աշխատակիցներ, հետաքննող լրագրողներ մասնակցել են ԺԶՀ-ի կողմից կազմակերպած **«Բաց աղբյուրներից օպերատիվ տեղեկությունների ձեռքբերման» թեմայով դասընթացին**, որի նպատակն էր աջակցել ապօրինի ճանապարհով ձեռք բերված գույքի հայտնաբերման կարողությունների զարգացմանը:

A group of prosecutors, Corruption Prevention Commission staff, and investigative journalists took part in the **Open-Source Intelligence Gathering course** organized by DDF that aimed to support the development of capacity to discover ill-gotten assets.

Հիմնադրամը Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» կազմակերպության և Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի հետ համատեղ տասնյակ **առաջարկներ է ներկայացրել** Հակակոռուպցիոն բարեփոխումների նոր ռազմավարության մշակման վերաբերյալ: Այդ առաջարկների զգալի մասը ներառվել է ռազմավարական փաստաթղթերում և դրանց հիման վրա մշակվել է նաև ՀԿ-ների համատեղ զեկույցը՝ հասցեագրված Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությանը Հայաստանի կողմից միջազգային հակակոռուպցիոն պարտավորությունների իրականացման վերաբերյալ:

The Democracy Development Foundation, jointly with the Transparency International Anti-Corruption Center, the NGO “Protection of Rights without Borders”, and the Law Development and Protection Foundation, **presented dozens of recommendations** on the development of a new Anti-Corruption Reform Strategy. The majority of the recommendations were integrated into strategic documents and served as the foundation for drafting a joint report by NGOs on Armenia’s adherence to international anti-corruption obligations, which was submitted to the Organization for Economic Cooperation and Development.

Հետաքննող լրագրողներ ՀԿ-ին տրամադրած աջակցության շնորհիվ պատրաստվել են կարևոր հետաքննություններ կոռուպցիոն ռիսկերի, շահերի բախման, գնումների ոլորտում չարաշահումների և այլ խախտումների բացահայտման ուղղությամբ: 2023թ.-ին «Հետք»-ը հրապարակել է 34 հետաքննական նյութ, որոնց հիման վրա 20 վարույթ է նախաձեռնվել իրավապահ համակարգի տարբեր կառույցների կողմից: Վարույթներից մի քանիսն արդեն ավարտվել են՝ տարբեր պաշտոնյաների նկատմամբ վարչական տուգանքներով, մի մասն ընթացքի մեջ է, իսկ որոշ վարույթների հիման վրա հարուցվել են քրեական գործեր:

With support to the Investigative Journalists NGO, important investigations were carried out with a view to exposing corruption risks, conflicts of interests, procurement abuses, and other violations. In 2023 «Hetq» published 34 investigative materials, based on which 20 proceedings were initiated by various structures of the law enforcement bodies. Certain proceedings have concluded with administrative fines imposed on several officials, while others remain ongoing. Additionally, criminal cases have been initiated based on certain investigative materials.

«Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի հետ համագործակցությունը «Հետք»-ին կայուն զարգացման և իր հիմնական առաքելությունը կատարելու հնարավորություն է ընձեռել: Մեր համագործակցության շնորհիվ բացահայտվել են կոռուպցիոն, շահերի բախման, պաշտոնեական դիրքի չարաշահման դեպքեր՝ հնարավորություն ընձեռելով հանրությանը վերահսկողություն իրականացնել, իսկ պետական մարմիններին՝ արձագանքել և կանխարգելիչ գործողություններ ձեռնարկել»:

Էդիկ Բաղդասարյան, *«Հետաքննող լրագրողներ» ՀԿ նախագահ*

"The cooperation with the Democracy Development Foundation enabled Hetq to develop sustainably and to carry out its core mission. Our cooperation led to exposing cases of corruption, conflicts of interests, and abuse of official position, enabling the public to oversee and the state bodies to respond and take preventive measures."

Edik Baghdasaryan, *Chairman of the Investigative Journalists NGO*

Հիմնադրամը շարունակել է համախմբել քաղաքացիական հասարակության կազմակերպություններին՝ **Կառավարության հետ քննարկելու Հանրային կառավարման բարեփոխումների օրակարգը,** առաջնահերթությունները և հիմնախնդիրները: Ներկայացվել են մի շարք առաջարկներ, քննարկվել են քաղհասարակությանը դրանց ներառելու հնարավորությունները, ինչպես նաև հանրային ծառայությունների արդյունավետության բարձրացման ուղիները:

The Foundation continued to bring together the Government and the civil society organizations to **discuss the priorities and challenges of the Public Administration Reforms.** Several proposals were presented, and discussions were held regarding the potential engagement of civil society organizations in the reform process, as well as strategies for improving the effectiveness of public services.

Մարդու իրավունքներ

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամը համագործակցում է ՔՀԿ-ների, կոալիցիաների, փորձագետների, ակտիվիստների, պետական կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ՝ մարդու իրավունքների պաշտպանության օրենսդրությունը և օրենքի արդյունավետ կիրարկումը բարելավելու համար: Տվյալ ոլորտում մեր թեմատիկ առաջնահերթություններն են հավաքների, միավորումների, ազատ արտահայտման, արդար դատավարության և խոշտանգումներից զերծ մնալու իրավունքների պաշտպանությունը:

Այս ոլորտում գործողությունները ներառում են մշտադիտարկում, փաստաթղթավորում, շահերի պաշտպանություն, քաղաքականության մշակում և ռազմավարական դատավարություն՝ երաշխավորելու բոլոր անհատների արդար պաշտպանությունը և ապահովելու նրանց իրավունքների և ազատությունների լիարժեք իրացումը:

Human Rights

The Democracy Development Foundation collaborates extensively with a diverse network of CSOs, coalitions, legal experts, activists, state institutions, and international organizations to enhance legislation concerning the safeguarding of human rights and effective law enforcement. The primary emphasis is on fortifying rights related to the freedoms of assembly, association, and expression, as well as fair trial and torture prevention.

Our activities in this field encompass monitoring, documentation, advocacy, policy development and strategic litigation to guarantee equitable protection for all individuals and to ensure the full enjoyment of their rights and freedoms.

2023 թվականին ԺԶՀ աջակցել է քրեակատարողական հիմնարկներում մարդու իրավունքների մշտադիտարկմանը, որպեսզի ամենախոցելի վիճակում գտնվող անձինք ունենան պաշտպանության պատշաճ երաշխիքներ:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի (ՀՔԱՎ) գրասենյակի հետ համատեղ մենք ջատագովություն ենք իրականացրել Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության մշտադիտարկման, ինչպես նաև նոր ռազմավարության մշակման ուղղությամբ: ԺԶՀ աջակցությամբ ՀՔԱՎ-ը տրամադրել է իրավաբանական խորհրդատվություն և դատական պաշտպանություն 1000-ից ավելի մարդկանց, այդ թվում՝ զինծառայողների, դատապարտյալների, բռնության զոհերի, սոցիալական խոցելի իրավիճակում գտնվող անձանց, իրականացրել է ռազմավարական դատավարություններ խոշտանգումներից զերծ մնալու, կյանքի, աշխատանքային և այլ հիմնարար իրավունքների պաշտպանության շրջանակներում: 2023 թ.-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ՀՔԱՎ-ի 3 ռազմավարական գործերով կայացրել է վճիռ:

In 2023, DDF supported the monitoring of human rights in penitentiary institutions to ensure that persons in the most vulnerable situation have access to proper safeguards.

Jointly with the Helsinki Citizens' Assembly Vanadzor (HCAV) Office, we advocated for the monitoring of the National Human Rights Protection Strategy and the development of a new strategy. With DDF's support, HCAV provided legal counseling and court protection to over 1,000 individuals, including military service personnel, convicts, victims of violence, and socially vulnerable individuals. HCAV also pursued strategic litigation to protect the right to be free from torture, the right to life, labor right, and other fundamental human rights. In 2023, the European Court of Human Rights adopted judgments in three strategic cases brought forward by HCAV.

«Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի գործունեության դադարից հետո, չնայած անցումային դժվարություններին, ժողովրդավարության զարգացման հիմնադրամը գործընկերների հետ կարողացավ ապահովել արդյունավետ համագործակցություն՝ դիմագրավելու մարդու իրավունքների և ժողովրդավարության մարտահրավերներին»:

Արթուր Սաքունց, *Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ*

"Despite the interruption in the activities of Open Society Foundations-Armenia and the transitional hurdles, the Democracy Development Foundation, in collaboration with its partners, successfully maintained effective cooperation to address challenges to human rights and democracy."

Artur Sakunts, *Chairman of the Helsinki Citizens' Assembly Vanadzor Office*

Մեր համագործակցությունը ՀՀ ներքին գործերի նախարարության և քաղաքացիական հասարակության կառույցների հետ միտված է **Ոստիկանության բարեփոխումների նոր ռազմավարություն մշակելուն**, **ձերբակալված անձանց իրավունքների պաշտպանությանը**, ինչպես նաև հնարավոր բռնությունների բացառմանը:

Our collaboration with the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia and civil society organizations is aimed at **developing a new strategy for police reforms**, **the protection of rights of arrested persons**, and the prevention of any type of ill-treatment.

Հիմնադրամի ներկայացուցիչը դարձել է ոստիկանության ծառայողների ատեստավորման հանձնաժողովի անդամ, պարբերական կարգով մասնակցել ոստիկանության ծառայողների ատեստավորման քննություններին՝ ապահովելով քաղաքացիական վերահսկողություն:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության համար միջազգային ջատագովությունը եղել է ԺՀՀ աշխատանքի կարևոր ուղղություններից մեկը: Այս նպատակով կազմվել են բազմաթիվ զեկույցներ, հայտարարություններ, դիմումներ, կոչեր, որոնք ուղարկվել են ՄԱԿ-ի հատուկ կառույցներին, Եվրոպայի Խորհրդին, Եվրամիության կառույցներին, ինչպես նաև առանձին պետությունների կառավարություններին:

2023 թվականի ընթացքում ԺՀՀ և գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչները Լեռնային Ղարաբաղի բլոկադայի դադարեցման, ՄԱԿ-ի արդարադատության դատարանի որոշումների անհապաղ կատարման, հայ ռազմագերիների ազատ արձակման, Հայաստանի սահմաններին դիտորդական առաքելությունների ամրապնդման թեմայով մասնակցել են բազմաթիվ համաժողովների և քննարկումների:

Աշակվել և տարբեր միջազգային կառույցներ ներկայացվել են զեկույցներ և անհատական դիմումներ Ադրբեջանում հայատյացության, ռազմական ագրեսիայի հետևանքով տուժած անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ:

DDF's representative became a member of the police officers' Attestation Commission and regularly participated in the police attestation exams, thereby ensuring civil oversight of the process.

A key area of human rights protection was the international advocacy for the protection of the rights of persons forcibly displaced from Nagorno-Karabakh. To this end, numerous reports, statements, applications, and appeals were prepared and sent to the UN's special bodies, the Council of Europe, the European Union, and foreign governments.

In the course of 2023, representatives of DDF and partner organizations contributed to numerous conferences and discussions on the topics of ceasing the blockade of Nagorno-Karabakh, immediately executing the decisions of the International Court of Justice, releasing the Armenian prisoners of war, and fortifying the monitoring missions alongside Armenia's borders.

Reports and individual applications were prepared and sent to various international organizations with respect to Armenophobia in Azerbaijan and the protection of the human rights of persons affected by the armed aggression.

Հայտարարություններ և զեկույցներ

- Հատուկ զեկույց Ադրբեջանի հայատյաց քաղաքականության հետևանքով հայկական մշակութային ժառանգությանը հասցված վնասների և սպառնալիքների վերաբերյալ
- Քաղհասարակությունը դիմել է ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնակատարին՝ Լեռնային Ղարաբաղ և Հայաստան դիտորդական առաքելություն ուղարկելու պահանջով
- ՄԱԿ-ի զեկույցում ներառվել է Ադրբեջանում հայատյացության մասին Հայաստանի քաղհասարակության տրամադրած տեղեկատվությունը
- Հայաստանի քաղաքացիական հասարակության մի խումբ կազմակերպությունների համատեղ հայտարարությունը Շառլ Միշելի մամլո հայտարարության վերաբերյալ

Announcements and reports

- Special report on the damages and threats to the Armenian cultural heritage as a result of Armenophobic policies of Azerbaijan
- Armenian CSOs request urgent OHCHR mission to Nagorno Karabakh and Armenia
- UN report incorporates the information provided by Armenia's civil society on Armenophobia in Azerbaijan
- Joint statement by a group of Armenia's civil society organizations on the press statement by European Council President Charles Michel

- Անհապաղ միջամտության մասին դիմում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին
- Request for urgent intervention by the United Nations Secretary-General
- ՀԿ-ները դիմել են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին Արցախում հումանիտար ճգնաժամի առնչությամբ հրատապ կոչով հանդես գալու պահանջով
- Urgent call for action by the UN Security Council to address the ongoing humanitarian crisis in Nagorno-Karabakh (Artsakh)
- ՀԿ-ները կրկին դիմում են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին ԱԽ առաջիկա նիստին ընդառաջ
- NGOs make another appeal to the UN Security Council ahead of its forthcoming session
- Մտահոգություններ և հիասթափություն Լեռնային Ղարաբաղ ՄԱԿ-ի վերջին առաքելությունից
- Concerns and disappointment over the recent UN mission to Nagorno-Karabakh
- Հայաստանյան իրավապաշտպան կազմակերպությունների համատեղ հայտարարությունը Ադրբեջանի կողմից ապօրինի ձերբակալությունների վերաբերյալ
- Joint statement by Armenia's human rights organizations on unlawful arrests by Azerbaijan

Մեդիա և քաղաքացիական մասնակցություն

Հայաստանում խոսքի ազատության և քաղաքացիական մասնակցության առաջխաղացման համար ԺՀՀ սերտ համագործակցում է լրագրողների, համայնքային ակտիվիստների և մարդու իրավունքների պաշտպանների լայն ցանցի հետ: Այս համագործակցությունը նախատեսում է աջակցություն անկախ մեդիա հարթակներին, այդ թվում՝ մարզային լրատվամիջոցներին, հետաքննական լրագրության նախաձեռնություններին և քաղաքացիական հասարակության համայնքային (grassroots) կազմակերպություններին:

Այս հավաքական ջանքերը ծառայում են ժողովրդավարական արժեքների ամրապնդման, ապատեղեկատվության և հակաժողովրդավարական պատմույթներին հակազդման, մարդու իրավունքների, ժողովրդավարական սկզբունքների և արդյունավետ կառավարման մասին բովանդակության ստեղծման ու տարածման նպատակին:

Media and Civic Participation

In pursuit of advancing the freedom of expression and civic engagement in Armenia, DDF collaborates extensively with a robust network of journalists, community-based civic activists, and human rights advocates. This collaboration entails bolstering independent media platforms, including regional ones, as well as investigative journalism endeavors and grassroots civil society organizations.

These collective efforts serve to reinforce democratic values, counter disinformation and anti-democratic narratives, as well as foster evidence-driven content centered on human rights, democratic principles, and good governance.

Մարզային անկախ լրատվամիջոցների հզորացմանը նպաստելու հանձնառությամբ Ժողովրդավարության զարգացման հիմնադրամը մաս է կազմել **«Եվրոպական մեդիահարթակ Հայաստանում. հուսալի և պրոֆեսիոնալ լրատվամիջոցների կառուցում» ծրագրին,** որն իրականացվել է Դոյչե Վելլե Ակադեմիայի (DW Akademie), ԲԲՍ Մեդիա Էքշնի (BBC Media Action), Հետք/ Հետաքննող լրագրողներ ՀԿ-ի, Ֆակտոր ԹՎ-ի կողմից՝ Եվրոպական Միության և Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ) աջակցությամբ:

With a commitment to strengthen regional-level independent mass media, DDF joined the **European Media Facility in Armenia: Building Sustainable and Professional Media in Armenia** project implemented by the Deutsche Welle Akademie, BBC Media Action, Hetq Investigative Journalists NGO, and Factor TV with the support of the European Union and the German Federal Ministry for Economic Cooperation and Development (BMZ). Under the project, DDF extended grants to five regional media, enabling the grantee organizations to expand the range of topics covered by them, to diversify their media production formats, to improve their hardware and media content quality, and to augment their audience.

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամն այս ծրագրի շրջանակում տրամադրել է դրամաշնորհներ **5 մարզային լրատվամիջոցների**, ինչի արդյունքում շահառու կազմակերպությունները հնարավորություն են ունեցել ընդլայնել լուսաբանվող խնդիրների թեմատիկ շրջանակը, բազմազանացնել մեդիա արտադրության ձևաչափերը, բարելավել տեխնիկական միջոցները, բարձրացնել բովանդակության որակը և մեծացնել լսարանը:

Under the project, DDF extended grants to five regional media, enabling the grantee organizations to expand the range of topics covered by them, to diversify their media production formats, to improve their hardware and media content quality, and to augment their audience.

ԴԶՀ-ն կարևորում և սատարում է Հայաստանում անկախ լրատվամիջոցներին: Այս նպատակով, մասնավորապես, աջակցել ենք Factor.am-ին՝ անկողմնակալ լուսաբանելու երկրում ընթացիկ իրադարձությունները, ռեպորտաժների և հեղինակային հաղորդաշարերի միջոցով վերլուծելու հանրային քաղաքականության առանցքային խնդիրները, ինչպես նաև կազմակերպելու ներառական հեռուստաբանավեճեր: Factor.am-ը բարձրաձայնում է քաղաքացիական հասարակության տեսակետները և սպառիչ ու անկողմնակալ տեղեկատվություն տրամադրում արդարադատության, մարդու իրավունքների, լավ կառավարման և այլ կարևոր հարցերի վերաբերյալ՝ օժանդակելով Հայաստանում քաղհասարակության ուժեղացմանը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանը, սոցիալական արդարության և իրավահավասարության սկզբունքների մասին հանրային ընկալումների ձևավորմանը:

DDF values and supports independent media in Armenia. To this end, we supported Factor.am in delivering impartial coverage of current national events, analyzing key public policy issues through stories and feature series, and organizing inclusive television debates. Factor.am provides exhaustive and impartial information on justice, human rights, and good governance issues, facilitating the strengthening of civil society in Armenia, the protection of human rights and fundamental freedoms, and improving the public perceptions of social justice and equal rights.

ԴԶՀ աջակցությամբ Medialab.am լրատվական կայքն ստեղծել է այլընտրանքային մուլտիմեդիա բովանդակություն՝ նպաստելով որակյալ և վերլուծական լրագրությանը: Մեդիալաբը լուսաբանել է Հայաստանի կարևոր քաղաքական և սոցիալական խնդիրները, թողարկել մարդկային պատմություններ, ինչպես նաև հրապարակել թեմատիկ հոդվածներ և հարցազրույցներ կրթության, մարդու իրավունքների, անվտանգության, հավասարության և այլ առանցքային թեմաների վերաբերյալ:

DDF supported the Medialab.am news website in creating alternative multimedia content, contributing to high-quality analytical news reporting. Medialab reported on Armenia's vital political and social problems, produced inspiring human stories, and published feature articles and interviews on education, human rights, security, equality, and other essential topics.

Աջակցելով «Ալիք մեդիա»-ին՝ մենք նպատակ ենք հետապնդել խթանել երկխոսությունը Հայաստանի մարզային քաղաքների և գյուղական բնակավայրերի մարտահրավերների շուրջ և նպաստել երկրի համաչափ զարգացմանը: Այդ նպատակով «Ալիք մեդիա»-ն պատրաստել և թողարկել է «Չերևան» շարքի վավերագրական ֆիլմեր՝ ցուցադրելով այդ քաղաքների խնդիրները, ինչպես նաև զարգացման ներուժը: Կազմակերպվել են դիտումներ՝ ներգրավելով շահագրգիռ կողմերին՝ քննարկելու մարզային քաղաքների խնդիրների լուծումները և գործողությունները:

By supporting Aliq Media, we have pursued the aim of promoting dialogue on the challenges faced by Armenia's regional towns and rural settlements and contributing to the equitable development of the country. To this end, Aliq Media produced and released the "Chyerevan" documentary series, showcasing the problems and development potential of these towns. Screenings were organized, engaging the stakeholders to discuss actions and solutions for the problems affecting the regional towns.

Իրազեկ քաղաքացիների միավորում ՀԿ-ն ԺԶՀ աջակցությամբ աշխատանք է տարել ապատեղեկատվության դեմ պայքարում: Կազմակերպությունը Fip.am հարթակի միջոցով մշտադիտարկել է Հայաստանում տարբեր աղբյուրներից տարածվող տեղեկատվության հոսքերը, իրականացրել փաստերի ստուգում, պատրաստել և հրապարակել է հետաքննական նյութեր՝ գնահատելով տեղեկատվության հավաստիությունը և պահպանելով անաչառության և անկողմնակալության սկզբունքները:

The Union of Informed Citizens NGO has been combatting disinformation with support from the DDF. Through its Fip.am platform, the Union of Informed Citizens monitored information flows originating from various sources in Armenia, conducted fact checking, and produced and published investigative materials, evaluating the truthfulness of information, and respecting the principles of impartiality and neutrality.

«Հայաստանի ներկայիս իրավիճակում ապատեղեկատվության կանխումը, դրա դեմ պայքարը չափազանց մեծ նշանակություն ունեն: ԺՀՀ աջակցությամբ մենք շարունակել ենք Հայաստանում արդեն մեծ ճանաչում ունեցող FIP.am փաստերի ստուգման հարթակի աշխատանքը՝ զերծ պահելով մեր հանրությանը մանիպուլյացիաներից»:

***Դանիել Իոաննիսյան**, Իրազեկ քաղաքացիների միավորում ՀԿ-ի ծրագրերի համակարգող*

«In Armenia's current landscape, combating disinformation and its prevention are of utmost importance. With the assistance of DDF, we have sustained the operations of the FIP.am fact-checking platform, already renowned in Armenia, safeguarding our public from manipulation.»

***Daniel Ioannisyan**, Programs Coordinator at the Union of Informed Citizens NGO*

Մենք աջակցել ենք Հանրային լրագրության ակումբի **Մեդիա կենտրոն** հարթակին՝ բարձրաձայնելու Հայաստանի կարևորագույն խնդիրներն ուղիղ հեռարձակվող բաց քննարկումների, հարցազրույցների, ասուլիսների և հանրային այլ միջոցառումների միջոցով: Այս ծրագիրն օգնել է ներկայացնել քաղաքացիական հասարակության դիրքորոշումը հրատապ բարեփոխումների վերաբերյալ, ինչպես նաև ավելի խորը պատկերացում ձևավորել մարդու իրավունքների պաշտպանության, անվտանգության, ժողովրդավարական արժեքների, սոցիալական արդարության մասին:

We supported the **Media Center** platform of the Public Journalism Club to voice Armenia's most critical problems through livestreamed open discussions, interviews, press conferences, and other public events. This project helped present civil society's position on urgently needed reforms and develop a deeper understanding of human rights protection, security, democratic values, and social justice.

Մեր աջակցությամբ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբն իրականացնում է ծրագիր Սյունիքի, Վայոց Ձորի, Տավուշի, Գեղարքունիքի և Արարատի մարզերի համայնքներում՝ ընդլայնելու հանրային մասնակցությունը և խթանելու տեղական ինքնակառավարումը կրթական ծրագրերի, ակտիվ քաղաքացիական ներգրավվածության և իրազեկման բարձրացման միջոցով: Ծրագիրը համայնքային կոնկրետ խնդիրների բացահայտմանը և լուծմանն ուղղված կարողությունների զարգացման հնարավորություն է ընձեռում տեղական երիտասարդական խմբերի, կանանց, ավագանիների գործող և թեկնածու անդամների համար:

With our backing, the Asparez Journalists Club has executed a project across communities in the Syunik, Vayotz Dzor, Tavush, Gegharkunik, and Ararat regions. The initiative aims to enhance public participation and advance local self-government through educational programs, active civic engagement, and heightened awareness. This endeavor offers capacity-building opportunities for local youth groups, women, as well as current and aspiring council members to identify and address specific community issues.

«Անկախ ԶԼՄ-ների ֆինանսավորման աղբյուրների այս բավականին բարդ դրության պայմաններում ԺԶՀ և գործընկեր դոնորների օժանդակությունը, հատկապես մարզային ԶԼՄ-ներին, փրկության օղակ է: Հնարավորություն ունեցանք անդրադառնալու և լուսաբանելու այնպիսի թեմաներ, ինչպիսիք են հանքարդյունաբերության վնասները, համայնքների խոշորացման ուժեղ և թույլ կողմերը, գյուղական աղքատությունը, ընտանեկան բռնությունը, անօթևանությունը, համայնքների անհամաչափ զարգացումը, կանանց խնդիրները հեռավոր համայնքներում և նախնական կրթության ոլորտում փաստացի անհավասարությունը»:

***Լևոն Բարսեղյան**, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ*

"Given the challenging landscape of funding sources for independent media, the backing of DDF and partner donors is a crucial lifeline, particularly for regional outlets. This support has allowed us to delve into various critical topics, including the adverse impacts of mining, the dynamics of community expansion, rural poverty, domestic violence, homelessness, disparities in community development, women›s issues in remote areas, and disparities in primary education."

***Levon Barseghyan**, Board Chairman of the Journalists Asparez Club*

խաղ – հարցաշար

ՔԱՂԱՔԱՊԵՏ

2023 թ. Երևանի ավագանու ընտրություններին ընդառաջ «Քաղաքական երկխոսություն» ՀԿ-ն ԺԶՀ աջակցությամբ իրականացրեց նախաձեռնություն՝ խթանելու և ընդլայնելու քաղաքացիների մասնակցությունը համայնքային խնդիրների շուրջ քննարկումներին: Ընտրությունների ծայրահեղ քաղաքականացված նախընտրական քարոզարշավի փուլում կազմակերպության ծրագիրը, կիրառելով **նորարարական մեթոդներ**, հնարավորություն ընձեռեց Երևանի բնակիչներին ուշադրության կենտրոնում պահել քաղաքին վերաբերող առաջնահերթ խնդիրները և զուգահեռ ծանոթանալ քաղաքային զարգացման գաղափարախոսություններին: Հարցաշար-խաղի արդյունքների վերլուծությունը ներկայացվել է Երևանի ավագանու անդամներին:

Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան և ԺԶՀ աջակցությամբ **«Բուն»** գիտամշակութային հիմնադրամը նպաստել է Հայաստանում բնակվող ռուս և ուկրաինական համայնքի իրավապաշտպանների և տեղական իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների միջև ընդհանուր հարթակների ստեղծմանը և նրանց միջև համագործակցության խթանմանը: Բուն ԹՎ-ն **վավերագրական ֆիլմերի շարք է** նկարահանել՝ ներկայացնելով ՌԴ-ից և Ուկրաինայից Հայաստան տեղափոխված ընտանիքների պատմությունները: Ֆիլմերի դիտումներն ուղեկցվել են զրույցներով ներկա անհանգիստ ժամանակաշրջանում մարդու իրավունքների խթանման և պաշտպանության կարևորության մասին:

In 2023, leading up to the Yerevan municipal council election, Political Dialogue NGO conducted a project supported by DDF aimed at enhancing and encouraging citizen participation in discussions concerning community matters. Implementing **innovative methods** during the highly politicized election campaign, the project empowered Yerevan residents to address priority issues impacting the city while gaining insight into urban development ideologies. The analysis of the quiz results was subsequently presented to Yerevan municipal councilors.

With support of Embassy of France to Armenia and DDF the **Boon** Scientific-Cultural Foundation contributed to establishing collaborative platforms and fostering cooperation among human rights advocates from the Russian and Ukrainian communities residing in Armenia, along with local human rights NGOs. Boon TV produced a **documentary series** featuring narratives of families who relocated to Armenia from the Russian Federation and Ukraine. Screenings of these documentaries were accompanied by discussions highlighting the significance of advocating for and safeguarding human rights amid the current period of instability.

Սոցիալական արդարություն

ԺԶՀ-ն աշխատում է նպաստելու սոցիալական արդարությանը և հասարակության առավել մարգինալացված խմբերի համար կենսական նշանակության սոցիալական ծառայությունների՝ մասնավորապես, հանրային առողջապահության և կրթության հավասար հասանելիությանը: Ի լրումն ցավամոքիչ (պալիատիվ) խնամքի և հոգեկան առողջության ոլորտներում լայնածավալ նախաձեռնություններին՝ մենք հանձնառու ենք առաջ մղել մարդու իրավունքների վրա հիմնված և առողջապահական ծառայությունների հավասար հասանելիության մոտեցումը, մասնավորապես առողջության համապարփակ ապահովագրության շրջանակում:

Մենք պայքարում ենք անհավասարության, նախապաշարմունքների և խտրականության պրակտիկայի դեմ՝ բարձրացնելով դասավանդողների և առողջապահության ոլորտի աշխատողների իրազեկվածությունը և մասնագիտական պատրաստվածությունը: Այս աշխատանքի նպատակն է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ սոցիալական արդարության հիմնախնդիրներն արդյունավետ կլուծվեն՝ երաշխավորելով հավասար հնարավորություններ, ներառականություն և մարդու իրավունքների սկզբունքների մասին իրազեկվածություն:

Social Justice

DDF endorses social justice and equitable access to vital social services for the most marginalized segments of society, particularly in the realms of vital social services such as public health and education. In addition to expansive initiatives related to palliative care and mental health, DDF is committed to fostering a human rights-based approach and equal access to healthcare services particularly within the universal health coverage framework.

DDF addresses inequalities, prejudices, and discriminatory practices, by enhancing the competence and awareness of professional groups, particularly educators and health workers. The goal is to create an environment where social justice issues are effectively addressed, ensuring equal opportunities, inclusivity, and awareness of human rights principles.

ԺԶՀ-ն, համագործակցելով «Կրթություն և համերաշխություն» արհմիության հետ, ՀՀ -ում Էստոնիայի դեսպանատան աջակցությամբ սկսել է հետազոտել հանրակրթական դպրոցներում հիմնական էթիկական խնդիրները սոցիալական արդարության համատեքստում: Հենվելով հետազոտության արդյունքների և մանկավարժական աշխատողների **բարեվարքության կանոնների** վրա՝ ստեղծվելու են մանկավարժների համար տեսահոլովակներ՝ ուղղված սոցիալական արդարության սկզբունքների գործնական ու արդյունավետ կիրառմանը:

In collaboration with the Education and Solidarity trade union and with the support of the Estonian Embassy in Armenia DDF has initiated research on the primary ethical concerns within public schools concerning social justice. Utilizing the findings of this research and the professional **code of conduct** for educational staff, instructional videos will be developed to assist teachers in applying the principles of social justice practically and effectively.

ԺԶՀ-ն գործընկերների հետ միասին մշակել և ներկայացրել է **«Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների դեմ պայքարի ազգային ռազմավարության»** նախագծի վերաբերյալ առաջարկություններ, որոնք քննարկվել են Կախվածությունների բուժման ազգային կենտրոնի հետ և ներկայացվել ՀՀ առողջապահության նախարարությանը և ոստիկանությանը: Կազմակերպվել է **հանդիպումների շարք** Կախվածությունների բուժման ազգային կենտրոնի և իրավապաշտպան ու երիտասարդական ՀԿ-ների միջև՝ քննարկելու երիտասարդների շրջանում թմրամիջոցների գործածման հետ կապված խնդիրները:

DDF and its partners collaborated on drafting and presenting recommendations concerning the proposed **National Strategy for Combating Drug Addiction and Narcotic Substances in the Republic of Armenia**. These recommendations underwent discussion with the National Center for the Treatment of Addictions and were subsequently presented to the Republic of Armenia Ministry of Health and Police. Additionally, **series of meetings** were arranged with the National Center for the Treatment of Addictions, along with human rights NGOs and youth NGOs, to address issues surrounding drug use among young individuals.

Կախվածությունների բուժման ազգային կենտրոնին ԺԶՀ-ն աջակցել է կազմակերպելու **«Թմրամիջոցների հիմնախնդիրը Հայաստանում. նոր մարտահրավերներ» թեմայով համաժողովը**, որի նպատակն էր նոր և առավել արդյունավետ փոխգործակցություն սկսել թմրամիջոցների առաջացրած խնդիրների հետ անմիջականորեն առնչվող կողմերի՝ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների միջև:

DDF provided support to the National Center for the Treatment of Addictions in hosting a **Conference on the Emerging Challenges posed by the Problem of Narcotic Substances in Armenia**. The objective was to initiate enhanced and more efficient collaboration among stakeholders directly addressing drug-related issues, including governmental bodies, non-governmental organizations, and international entities.

ԺԶՀ նախաձեռնությամբ կազմակերպվել է հանդիպումների շարք **Առողջության համապարփակ ապահովագրության թեմայով** ՀՀ առողջապահության նախարարության և իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՀԿ-ների միջև: ԺԶՀ աջակցությամբ հոլանդահայ մասնագետ Իսկոս Մորադին այցելել է Հայաստան և մասնագիտական խորհրդատվություն մատուցել ՀՀ առողջապահության նախարարությանը համապարփակ ապահովագրության ներդրման գործընթացում: Մասնագետը հանդիպել է նաև մի խումբ տեղական հասարակական կազմակերպությունների հետ՝ ներկայացնելու ապահովագրության համակարգի միջազգային փորձը:

DDF initiated a **series of meetings on the topic of universal health insurance** facilitating discussions between the Republic of Armenia Ministry of Health and human rights NGOs. With our assistance, Dutch-Armenian expert Iskos Morady visited Armenia to provide professional guidance to the Ministry of Health on the implementation of universal health insurance. The expert also engaged with a consortium of local non-governmental organizations to share international insights and experiences regarding insurance systems.

«Իրական աշխարհ, իրական մարդիկ» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ ԺԶՀ նպաստել է կյանքի տևողությունը սահմանափակող հիվանդություններով ապրող պացիենտների ցավամոքիչ (պալիատիվ) խնամքի ծառայությունների բարելավմանը և հասանելիության ապահովմանը: Իրականացվել են **մշտադիտարկման այցեր** պոլիկլինիկաներ՝ իրավունքների խախտումները փաստագրելու համար: Բուժաշխատողներին, պացիենտներին և նրանց հարազատներին տրամադրվել է իրավական և բժշկական խորհրդատվություն: Պալիատիվ օգնության ծառայությունների բարելավման նպատակով մշակվել են առաջարկություններ, որոնք ներկայացվել են ՀՀ առողջապահության նախարարությանը:

In partnership with the NGO Real World, Real People, DDF contributed to enhancing the quality and accessibility of palliative care services for patients with life-limiting illnesses. **Monitoring visits** were conducted at polyclinics to document human rights violations. Healthcare professionals, patients, and their families received legal and medical counsel. Recommendations for enhancing palliative care services were formulated and presented to the Republic of Armenia Ministry of Health.

«ԺԶՀ-ի հետ միասին մենք ձգտում ենք պալիատիվ խնամքը դարձնել ոչ միայն հասանելի, այլև արժանապատվության և մարդասիրության խորհրդանիշ: Տարիների ընթացքում մեր ջանքերի շնորհիվ ցավը մեղմող դեղամիջոցների սպառումն ավելացել է. ավելի շատ բուժհաստատություններ սկսել են տրամադրել այդ դեղամիջոցները, և ավելի շատ հիվանդներ են դիմում այս կենսական ծառայության համար: Այնուամենայնիվ, առջևում մեծ աշխատանք կա անելու»:

***Ժենյա Մայիլյան**, «Իրական աշխարհ, իրական մարդիկ» հասարակական կազմակերպության նախագահ*

"Together with DDF, we strive to make palliative care not only accessible, but a symbol of dignity, comfort and humanity in the face of health challenges. Over the years, due to our tireless efforts, the consumption of pain relievers has increased: more medical facilities have started providing these drugs and more patients are applying for this vital service. Nevertheless, much work still remains ahead of us."

***Zhenya Mayilyan**, President of Real World, Real People NGO*

ԺԶՀ-ն անդամակցում է ՀՀ առողջապահության նախարարությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման միջոցառումների ծրագրի մշտադիտարկման և գնահատման աշխատանքային խմբին:

DDF is a member of the monitoring and evaluation working group for the Ministry of Health program on Maintenance and Improvement of Mental Health.

Խաղաղություն և անվտանգություն

Խաղաղության և անվտանգության մեր նպատակն ունի երկու բաղադրիչ. այն ներառում է պայքար մարդու իրավունքների խախտումների դեմ հակամարտության համատեքստում և նախաձեռնողականություն հակամարտության վերափոխմանն ուղղված հասարակական ջանքերում: Մենք հավաքագրում և ներկայացնում ենք փաստեր Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության դեմ պատերազմական հանցագործությունների և մարդու իրավունքների խախտումների մասին՝ հետամուտ լինելով պատասխանատվության այդ հանցագործությունների համար:

Միաժամանակ մենք ձգտում ենք ստեղծել հարթակներ, որտեղ կարող են բաց քննարկվել տարբեր հեռանկարներ, մտքեր ու կարծիքներ՝ գտնելու կայուն լուծումներ արժանապատիվ խաղաղության համար: Մասնակցային գործընթացների միջոցով մենք նպաստում ենք հակամարտության դինամիկայի վերափոխմանը և ճանապարհ հարթում մարդու իրավունքների վրա հիմնված կայուն խաղաղության կառուցման ջանքերի համար:

Peace and Security

Our peace and security objective is twofold: it entails tackling human rights violations amid conflict contexts and proactively participating in societal efforts towards conflict transformation. We document and report the human rights violations and war crimes against the populations of Armenia and Nagorno-Karabakh, pursuing accountability for these transgressions.

Concurrently, we seek to create spaces where diverse perspectives can be openly discussed, grievances addressed, and sustainable solutions for a dignified peace explored. Through strategic interventions and participatory processes, DDF contributes to the transformation of conflict dynamics and paves the way for human rights-based approaches in peacebuilding efforts.

2023 թվականին ԺՀՀ-ն միջազգային ատյաններին և գործընկերներին բաց և փակ հանդիպումներում ներկայացրել է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բնակչության իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները՝ Լաչինի միջանցքի արգելափակման հետևանքով ստեղծված հումանիտար ճգնաժամը, ԼՂ հայ բնակչության հիմնարար իրավունքների ոտնահարումը, բռնի տեղահանումը, Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիների վերադարձը, Ադրբեջանի կողմից կամայական կալանավորումները, Հայաստանի սահմանամերձ բնակչության անվտանգության մարտահրավերները և այլն: Այս թեմայով զեկույցները կարելի է գտնել զեկույցի **«Մարդու իրավունքներ»** բաժնում:

In public and closed meetings held in the course of 2023, DDF presented to international organizations and partners the problems related to the protection of the rights of the population of Armenia and Nagorno-Karabakh, the humanitarian crisis created as a consequence of the blockade of the Lachin Corridor, the encroachments upon the fundamental rights of the Armenian population of Nagorno-Karabakh, the return of Armenian prisoners of war held in Azerbaijan, the arbitrary detentions by Azerbaijan, the security challenges affecting the population of Armenia in areas near the border, and so on. Reports on this topic can be found in the **Human Rights** section of this Annual Report.

ԺՀՀ ներկայացուցիչը բարձրաձայնել է Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների խախտումները Վարշավայում կայացած ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի Մարդկային չափողականությունների **կոնֆերանսին**:

DDF's representative raised the violations of human rights by Azerbaijan during the OSCE/ODIHR Human Dimension **Conference** held in Warsaw, Poland.

ԺԶՀ ներկայացուցիչները բարձրաձայնել են Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների խախտումները և ուժի կիրառման սպառնալիքները ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 54-րդ նստաշրջանին:

DDF's representatives presented the human rights violations and threats of use of force by Azerbaijan at the 54th session of the UN Human Rights Council.

Հայկական ուսումնասիրությունների «ԱՆԻ» կենտրոնը ԺԶՀ աջակցությամբ սկսել է նկարահանել ֆիլմաշար պատմական բեկումնային ժամանակաշրջանի՝ 1918-1922թթ. տեղի ունեցած զարգացումների վերաբերյալ: Ֆիլմաշարը նպաստելու է պատմաքաղաքական բարդ հարցերի շուրջ կառուցողական և տեղեկացված քննարկումների կայացմանը:

With DDF's support, the ANI Center for Armenian Studies started the production of a film series on events that occurred during a turning point in history — the period from 1918 to 1922. The film series will contribute to constructive and informed discussions on complex historical-political issues.

ԺԶՀ-ն ակտիվորեն մասնակցել է խաղաղության և անվտանգության թեմայով տեղական և միջազգային համաժողովների և քննարկումների, մշակել առաջարկներ տարածաշրջանում խաղաղ համակեցության նպատակի շուրջ:

DDF actively participated in local and international conferences and discussions on the topics of peace and security, and elaborated recommendations on the goal of peaceful coexistence in the region.

ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ
GRANTS

Վերոնշյալ գործողություններն իրականացնելու համար 2023 թվականին՝ գործունեության առաջին տարում, Ժողովրդավարության զարգացման հիմնադրամը սեփական ծրագրերի և բազմակողմ գործընկերությունների շրջանակում տրամադրել է

In order to implement the activities described above, in the course of 2023 – the first year of its operation, the Democracy Development Foundation awarded

53 ԴՐԱՄԱՇՆՈՐՀ GRANTS

37 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ORGANIZATIONS

16 ԱՆՀԱՏԻ INDIVIDUALS

2023 թ.-ին տրամադրված դրամաշնորհների ընդհանուր գումարը կազմել է

The total amount of grants awarded in 2023 amounted to

$1,141,050
€20,000

$1,116,161
€20,000
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ TO ORGANIZATIONS

$24,890 ԱՆՀԱՏՆԵՐԻՆ TO INDIVIDUALS

*ԺՀՀ տրամադրած դրամաշնորհները ներկայացված են հիմնադրամի կայքում՝ **Դրամաշնորհների ցանկ** բաժնում:*

*The grants awarded by DDF are presented in the **Grants List** section of the Foundation's website.*

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամը, որպես քաղաքացիական հասարակության ակտիվ անդամ, ներգրավված է և անդամակցում է հետևյալ կառույցների աշխատանքին.

- ՀՀ առողջապահության նախարարության հասարակական խորհուրդ
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հասարակական խորհուրդ
- ՀՀ արդարադատության նախարարության հասարակական խորհուրդ
- ՀՀ առողջապահության նախարարության հոգեկան առողջության պահպանման և բարելավման միջոցառումների ծրագրի մշտադիտարկման և գնահատման աշխատանքային խումբ
- ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի՝ ԵԱՀԿ աջակցությամբ ստեղծված Անվտանգության ոլորտի ժողովրդավարական վերահսկողության ազգային հարթակ
- Ոստիկանության ծառայողների ատեստավորման հանձնաժողով (անդամակցություն)
- Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության Հայաստանի ազգային պլատֆորմ
- Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թթ. գործողությունների ծրագրի կատարումը համակարգող խորհուրդ

MEMBERSHIP IN LOCAL AND INTERNATIONAL ORGANIZATIONS

As an active member of civil society, the Democracy Development Foundation participates in or is a member of the following structures:

- The Public Council of the Republic of Armenia Ministry of Health
- The Public Council of the Republic of Armenia Ministry of Labor and Social Affairs
- The Public Council of the Republic of Armenia Ministry of Justice
- The Mental Health Maintenance and Improvement Action Plan monitoring and evaluation working group of the Republic of Armenia Ministry of Health
- The National Platform for Democratic Oversight of the Security Sector, created with OSCE's support for the Republic of Armenia National Assembly's Standing Committee for Defense and Security Affairs
- The Attestation Commission for Police Officers
- The Armenian National Platform of the EU Eastern Partnership Civil Society Forum
- The Steering Committee for the implementation of the National Human Rights Protection Strategy 2023-2025 Action Plan

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Արդարացի դատաիրավական բարեփոխումներ» ծրագիր

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի առաջնորդությամբ մի խումբ կազմակերպությունների կոնսորցիումը, որը բաղկացած է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակից, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունից և Հանրային լրագրության ակումբից, իրականացնում է «Արդարացի դատաիրավական բարեփոխումներ» ծրագիրը:

Ծրագրի շրջանակում ջանքերն ուղղված են Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) և հակակոռուպցիոն մարմինների հաշվետվողականության բարձրացմանը, բարեվարքության պատշաճ ստուգումների կայացմանը, դատական նիստերի և դատավարությունների միջազգային չափանիշներին համապատասխանությանը, ոստիկանության հաշվետու և թափանցիկ բարեփոխումներին, ներառյալ անցումը ներքին գործերի նախարարությանը:

PARTNERSHIPS

Integrity of Justice Reforms project

A consortium of several organizations led by the Democracy Development Foundation, consisting of the Helsinki Citizens Assembly Vanadzor (HCAV) Office, the NGO Protection of Rights without Borders, and the Public Journalism Club, is implementing the Integrity of Justice Reforms project.

Efforts are directed towards enhancing the accountability of the Supreme Judicial Council (SJC) and anti-corruption bodies, implementing proper integrity checks, aligning court hearings and trials with international standards, holding accountable and transparent police reforms, including its transition to the Ministry of Internal Affairs.

ԱՐԴԱՐԱՑԻ
ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

«Եվրոպական մեդիահարթակ Հայաստանում. հուսալի և պրոֆեսիոնալ լրատվամիջոցների կառուցում» ծրագիր

«Եվրոպական մեդիահարթակ Հայաստանում. հուսալի և պրոֆեսիոնալ լրատվամիջոցների կառուցում» ծրագիրն իրականացվել է Դոյչե Վելլե Ակադեմիայի (DW Akademie), ԲԲՍ Մեդիա Էքշնի (BBC Media Action), Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի, Հետք/ Հետաքննող լրագրողներ ՀԿ, Ֆակտոր ԹՎ-ի կողմից՝ Եվրոպական Միության և Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ) աջակցությամբ:

Ծրագրի շրջանակում ֆինանսական աջակցություն է տրամադրվել մարզային լրատվամիջոցներին, կազմակերպվել են **170 օր** ընդհանուր տևողությամբ սեմինարներ և թրեյնինգներ, հրապարակվել է **ավելի քան 750 հոդված**, վերապատրաստվել են **54 մեդիա ղեկավարներ, 50 ուսուցիչներ, դասախոսներ և թրեյներներ, 250 անձ** մասնակցել է լսարանի հետազոտությանը և **ավելի քան 800 ակտիվ օգտատեր** միացել է InFact Network-ի առցանց հարթակին:

The European Media Facility in Armenia: Building Sustainable and Professional Media in Armenia project

The European Media Facility in Armenia: Building Sustainable and Professional Media in Armenia project was implemented by the Deutsche Welle Akademie, BBC Media Action, the Democracy Development Foundation, Hetq Investigative Journalists NGO, and Factor TV with the support of the European Union and the German Federal Ministry for Economic Cooperation and Development (BMZ)

Under the project, financial support was extended to regional (marz) media, **170 days** of seminars and trainings were organized, **over 750 articles** were published, **54 media leaders, 50 teachers, professors, and trainers were trained, 250 persons** were involved in an audience survey, and **over 800 active users** joined the InFact Network online platform.

Ծրագրի շրջանակում ԺՀՀ-ն **5 մարզային մեդիաների** տրամադրել է դրամաշնորհներ, ինչի արդյունքում շահառու կազմակերպությունները հնարավորություն են ունեցել ընդլայնել լուսաբանվող խնդիրների թեմատիկ շրջանակը, բազմազանացնել մեդիա արտադրության ձևաչափերը, բարելավել արտադրության որակը և տեխնիկական միջոցները: ԺՀՀ-ն սեմինարների շարք է կազմակերպել մարզային մեդիաների համար, որոնց ընթացքում քննարկվել է Հայաստանի համար կարևոր հարցերի համակողմանի լուսաբանման խնդիրը՝ մարդու իրավունքների, անվտանգության, խտրականության, արդարադատության, հաշվետու կառավարման, բնապահպանական, առողջապահության հասանելիության և այլ ոլորտներում:

Through the project, DDF extended grants to **5 regional (marz) media,** enabling the beneficiary organizations to broaden the range of topics and issues covered by them, to diversify the media production formats, and to improve the production quality and technical means. DDF organized a seminar series for regional (marz) media to discuss the challenges of comprehensive coverage of important issues in Armenia, including human rights, security, discrimination, justice, accountable governance, environment, access to health, and other topics.

«Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միասնական հաղորդակցության հարթակ» ծրագիր

Armenian Civil Society Organizations' Joint Communications Platform project



Ժողովրդավարության զարգացման հիմնադրամը, **Comms Hub** հիմնադրամի աջակցությամբ, Հայաստանի 9 հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ նպաստել է հանրային իրազեկվածության բարձրացմանը Հայաստանում քաղաքացիական հասարակության առաքելության և դերի մասին:

ԺԶՀ համակարգմամբ այս **9 կազմակերպությունները,** որոնք աշխատում են տարբեր հիմնահարցերի շուրջ, միավորվեցին՝ ստեղծելու **«Քաղաքացիական հասարակությունը քեզ համար»** միասնական հարթակը և իրականացնելու 7 հանրային արշավներ, որոնք նվիրված են տարբեր հիմնախնդիրների՝ ոստիկանության բարեփոխումներ, երիտասարդների մասնակցություն համայնքներում որոշումների կայացմանը և ապաստարանների երաշխավորմանը, տեղահանված և պատերազմից տուժած կանանց աջակցություն, ընտանեկան բռնության դեմ պայքար, իրավահավասարություն և հակախտրականություն, մանկապարտեզների հասանելիություն և այլն:

*«Քաղաքացիական հասարակությունը քեզ համար» նախաձեռնության մասին ամբողջական տեղեկատվությունը հասանելի է **այստեղ**:*

With the **Comms Hub** foundation's support, the Democracy Development Foundation partnered with nine Armenian civil society organizations to enhance public understanding of civil society's role in Armenia.

Coordinated by DDF, these **9 organizations** collaborated to establish the **Civil Society For You** joint platform and conducted seven public awareness campaigns covering diverse topics such as police reforms, youth engagement in local decision-making, support for displaced women affected by conflict, combating domestic violence, equal rights advocacy, and access to kindergartens.

*Complete information on the Civil Society For You initiative can be found **here.***

CS 4 YOU
ՔԱՂՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ

Համագործակցություն Եվրոպական Միության Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության հիմնադրամի հետ

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամը հանդես է եկել որպես Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության հիմնադրամի գործընկեր «**Հաղորդակցության լաբորատորիաներ**» ծրագրի մեկնարկի և փակման միջոցառման կազմակերպման գործում:

Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության հիմնադրամի «Հաղորդակցության լաբորատորիաներ» ծրագրի նպատակն էր աջակցել Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպություններին հաղորդակցության արշավներ մշակելու և իրականացնելու գործում: Ընտրվել են 12 կազմակերպություններ Ալավերդիից, Դիլիջանից, Վանաձորից, Ճամբարակից և Երևանից՝ արշավների գաղափարներով մասնակցելու Հաղորդակցության լաբորատորիաներին:

Collaboration with the Eastern Partnership Civil Society Facility of the European Union

The Democracy Development Foundation collaborated with the EU-funded Eastern Partnership Civil Society Facility to support organization of launch and closing events for the **Communication Labs** project.

The aim of the Communication Labs project of the Eastern Partnership Civil Society Facility was to support Armenia's civil society organizations in developing and implementing communications campaigns. 12 civil society organizations from Alaverdi, Dilijan, Vanadzor, Chambarak, and Yerevan were selected to participate in the Communication Labs with their campaign ideas.

ԶԵԿՈՒՅՑՆԵՐ, ԿԱՐԾԻՔՆԵՐ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2023թ.-ին ԺԶՀ-ն հեղինակել և/կամ ֆինանսավորել է հետևյալ զեկույցները, կարծիքներն ու առաջարկությունները.

- **Հատուկ զեկույց** Ադրբեջանի հայատյաց քաղաքականության հետևանքով հայկական մշակութային ժառանգությանը հասցված վնասների և սպառնալիքների վերաբերյալ
- **Առաջարկություններ.** «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերի վերաբերյալ
- ՀԿ-ների **հորդորը** Նախագահին. Չստորագրել ծանր ու առանձնապես ծանր հանցագործներին գործուն զղջալու հիմքով քր. պատասխանատվությունից ազատելու մասին օրենքը
- Քաղհասարակության **այլընտրանքային զեկույցը** ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեին
- Հասարակական կազմակերպությունների **կարծիքը** Հանրային խորհրդին կից փաստահավաք հանձնաժողով ստեղծելու օրենսդրական նախաձեռնության վերաբերյալ

REPORTS, OPINIONS, RECOMMENDATIONS

In the course of 2023, DDF developed and/or financed the following reports, opinions, and recommendations:

- **Special report** on the damages and threats to the Armenian cultural heritage as a result of Armenophobic policies of Azerbaijan.
- **Recommendations** on the draft Constitutional law on amending the supplementing the Constitutional law on the Judicial code and related laws.
- The **appeal** of NGOs to the President, not to sign into effect the law on releasing grave and particularly grave criminals from criminal responsibility on the ground of effective remorse.
- Civil society's **shadow report** to the UN Committee on Economic, Social and Cultural Rights (CESCR).
- The **opinion** of non-governmental organizations on the legislative initiative to create a fact-finding commission adjunct to the Public Council.

- Մարդու իրավունքների չափանիշների պաշտպանության վիճակը պաշտպանության գերատեսչության, իրավապահ և դատական մարմինների կողմից զորակոչի, վարժական հավաքների, զինվորական ծառայության կազմակերպման բնագավառում **զեկույց**

- **Report** on the state of protection of human rights standards by the Ministry of Defense, law enforcement and judicial bodies in the field of conscription, training callups and the organization of military service.

- Զինված ուժերի բարեփոխումներին, վերակառուցմանը և արդիականացմանն ուղղված ՀՀ կառավարության գործողությունների գնահատումը **զեկույց**

- **Evaluation report** on the efforts of the Republic of Armenia government aimed at armed forces reforms, restructuring, and modernization.

- «**Տեղեկանք** 2023 թվականի 1-ին կիսամյակում ՀՀ և ԼՂ Զինված ուժերում մահվան դեպքերի մասին»

- **Statement** on death cases in the armed forces of the Republic of Armenia and Nagorno Karabakh during the first half of 2023.

- «2023 թվականի ամառային զորակոչի ժամանակ արձանագրված խնդիրների վերաբերյալ» **տեղեկանք**

- **Statement** on problems documented during the 2023 summer military conscription.

- Զինվորական հաշվառման, զորակոչի, վարժական հավաքներին ներգրավելու վերաբերյալ **ուղեցույց**

- **Guide** on participation in military registration, conscription, and training callups.

- 2022-2023թթ. հանրության հոգեբանական վերականգնմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ **տեղեկանք**

- **Statement** on 2022-2023 activities aimed at the psychological recovery of the population.

Ժողովրդավարության
զարգացման
հիմնադրամ

ԿԱՊ ՄԵԶ ՀԵՏ

Հարցերի և համագործակցության առաջարկների համար խնդրում ենք գրել **info@demdev.org** էլեկտրոնային փոստին կամ զանգել **+374 77 533 862.**

CONTACTS

For questions and collaboration proposals, please contact **info@demdev.org** or call **+374 77 533 862.**

www.demdev.org

+374 77 533 862

info@demdev.org

DemocracyDevelopmentFoundation

DemDevelopment